

Տարեկան գինը 10 ռուբլի կէս տարւան 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».

Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆոն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են

խրաքանչիւր թաւին 2 կոպէկ.

Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՆԵՐԿԱՑ

1898

ԹԻՒՆՎԱՐԻ

„ՄՇԱԿ“

(26-րդ ՏԱՐԻ)

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

Կը հրատարակվի Թիֆլիսում, նոյն պրոգրամայով և նոյն ուղղութիւնով:
«ՄՇԱԿ» տարեկան գինը թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում 10 ռուբլի է, տաւան և մէկ և տաւան ամսականը՝ 9 ռ., ինչ և ութ ամսականը՝ 8 ռ., եթէ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝ 6 ռ., հինգ ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ., մի ամսականը՝ 1 ռուբլի:

«ՄՇԱԿ»-ը գրվել կարելի է ՌԴԲԱԳՐԱՏՈՐԻ (Բաղրամյան և Բարձրակայա փողոցների անկիւնը):
Կայտարարութեան ուրիշ քաղաքներէն «ՄՇԱԿ»-ը գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է գիտնել հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, редакция «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են թէ հայերէն, թէ ռուսերէն և թէ օտար լեզուներով:
Թաւին վճարվում է 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ

Գարավերջի ձայները. Այդ է ձանադարձը. Կ. Պօլսի ուսուցչուհի դասընթացը. Ներքին ՏԵՍՈՒ-ԹԻՒՆ. Նամակ Թիֆլիս-Խան-Շուքրալի. Նամակ Խմբագրութեան. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վերջին տեղեկութիւններ. Սուլթանի ծննդեան տարեգարծը. Վերջին փոփոխութիւնները Պարսկաստանում. Նամակ Բաղրամյանից. Նամակ Պարսկաստանից. Նամակ Ամերիկայից. Արտաքին լուրեր. ՍԵՆՏԻՆ ԼՈՒՐԵՐ. ՏԵՍՈՒԹԻՒՆՆԵՐ. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ Մէլերի աղբիւր:

ԴԱՐԱՎԵՐՋԻ ԶԱՅՆԵՐԸ

Տխուր, յուսահատական տպաւորութիւն են թողնում Ֆրանսիայից ստացվող հեռագիրները: Ամբողջ Ֆրանսիան հրապարակով իր զգուհներն է յայտնում հուշակաւոր վիպագործ Էմիլ Զօլային: Առաջին օրինակը տուեց, ի հարկէ, Պարիզը. նա սկսեց գովել այն միտքը, որ Գրեյֆուս անմեղ է, որ նրա դատաւարութիւնը դատաստանական մի զարհուրելի սխալ էր: Այդպէս համոզվածները էլ և Զօլայի վրա, մի այնպիսի այսօր թշուառ է Զօլայի վրա, մի այնպիսի խոշոր, աշխարհահռչակ տաղանդի վրա, որ Ֆրանսիայի փառքն ու պարծանքն է կազմում: Եւ այդ ամօթալի գործը տեղի է

ունենում այն ժամանակ, երբ ամբողջ քաղաքակրթ աշխարհը յափշտակութեամբ կարգում է Զօլայի նոր, «Պարիզ» վերնաշրջով վէպը, մի հեղինակութիւն, որի մէջ հուշակաւոր վիպագործը հանդէս է բերել իր ահագին տաղանդի ամբողջ ոյժը, մի հեղինակութիւն, որ աշխարհում է ընթերցողին իր հրաշալի նկարագրութիւններով, իր բովանդակութեամբ: Բայց ազգերը հիացած կարդում են «Պարիզը», իսկ Պարիզը կանչում է. «Թեք ձօլայի վրա»:

Ի՞նչ է պատահել: Ի՞նչ յանցանք ունի Զօլայ:

Երբ տարի առաջ մշտական տաժանակիր աշխատանքների դատապարտեց Ֆրանսիական մի օֆիցեր, Գրեյֆուս, որին մեղադրում էին թէ նա Ֆրանսիական գլխավոր զինուորական վարչութեան գաղտնի թղթերը վաճառել է Գերմանիային: Այժմ յանցաւորը գտնվում է իր աքսորավայրում, բայց Ֆրանսիայում երեսն է եկել այն միտքը, որ Գրեյֆուս անմեղ է, որ նրա դատաւարութիւնը դատաստանական մի զարհուրելի սխալ էր: Այդպէս համոզվածները էլ և Զօլայ: Նա քաղաքացիական պարտք համարեց առ ժամանակ բաժանվել իր վէպերից և պաշտպանել Գրեյֆուսին, հասկացնել որ նա անմեղ դատաւար է:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԵԼԻՔԻ ԱՂԶԻԿԸ

ԺԸ.

Ընդունելութիւնը տեղի ունեցաւ պատշաճ-բարձր: Սիրուն արև էր, բէկը ուղեց դրսում մնալ և բաղնիք գորգերի վրա: Նրա թիկնապահները մնացել էին ներքեւում. խօսակցութեան ներկայ էր միայն տանուտէր Օհանը. որ թարգմանի պաշտօն էր կատարում, երբ Աննա-Խաթունը դժուար էր հասկանում բէկին կամ չէր կարողանում թիւրքերէն լեզուով հասկացնել իր միտքը: Նա կանգնել էր տանուտէրի մօտ, նա-յում էր սիրիական թուխ ու յանդուգն դէմքին և սառնասիրտ պատասխաններ էր տալիս: Գալիանէն չէր սխալվել. գոնէ բէկը չէր նկատում, որ մէլքի կինը յուզված, անբաւական լինի: Վարանդայի տիկինը պատուար էր, նայն իսկ հպարտ: Որտեղից նա վերցրեց այդքան քաջութիւն:

Թէն բէկը սկզբից իրան հիւր էր անուանել. բայց այդպիսի անորոշ հիւր դեռ չէր տեսել մէլքի տունը: Անշափ գոռոզութիւնը խառն մի կծու արհամարհանքի հետ, որ միայն մահմեդական էր կարող ցոյց տալ իր հպատակ պիղծ գեաւուրի տանը, կաթում էր նրա իւրաքանչիւր չարժանաբանք, իսկ նրա կատաղի աչքերին ու

ահարկու յօնքերին տալիս էր մի արտայայտու-թիւն, որ արհամարհած գետնուրի մէջ միայն զգուհի կարող էր ծննդնել: Առանց քաջվելու, համարձակ իբրեւ ամեն ինչի տէր, նա դիտում էր ամբողջ ներքը, մանրամասն իմանում էր թէ իւրաքանչիւր դուռն ինչ նշանակութիւն ունի, ինչ կայ վերևում և ներքեւում: Գա անմեղ հեռաքրքրութիւն չէր, այլ կատարեալ հարցաքնն-նութիւն. կարծես պատկերազմի ժամանակ հա-կառակ բանակից հաշտութեան պատրուակով եկած մի զինուորական էր, որ, օգուտ քաղելով հանդամանքից, գնում, ուսումնասիրում է թըլ-նամու բերքի դիրքը, ամբողջութիւնները, նրանց թոյլ ու ուժեղ կողմերը: Այդ անդրադարձիւն էր այնքան սիրտ տալիս Աննա-Խաթունին: Հաշտվելով իր դրութեան հետ, մի անպաշտպան խեղճի դրութեան հետ, նա, ինչպէս այդ յատուկ էր Գիդակի արևին, մի բօսկում ընդունեց իր պատիւը հասկացող, գլուխը բարձր պահող գոհի դիրքը: Մէլք-Աւանի քայլը երբեք օտարների առաջ թուլութիւն, երկիւղ չէր ցոյց տալ:

Նա պահպանեց իր հանգստութիւնը և այն ժամանակ, երբ Սիւլէյման-բէկը յանկարծ հարց ու փորձ սկսեց մէլքի տանը ապրողների մա-սին: Այդին պատասխանեց, որ բացի Շահնազա-րից կայ և մի անդամալոյծ տղայ:

— Իսկ աղջիկ, հարցրեց բէկը. լիքը հայեացք գցելով նրա վրա—Մէլքին ես տեսայ, լաւն էր...

— Նա մեղ չէ պատկանում, նա տէր ունի, շտապով ընդհատեց Աննա-Խաթունը, որպէս զի

պարտւած է: Ինչպէս յայտնի է մեր ըն-թերցողներին, մի քանի օր առաջ Ֆրան-սիական զինուորական դատարանը դատում էր մի ուրիշ օֆիցերին, Էստէր-Հադիին, որ մեղադրվում էր իբրեւ մի անձ, որ կա-տարել էր Գրեյֆուսի յանցանքը: Գատա-րանը արդարացից էստէր-Հադիին: Բայց Գրեյֆուսի կողմնակիցները տեսան, որ կա-ռավարութիւնը չէ կամենում պարզել զոր-ծի իսկութիւնը. եթէ Էստէր-Հադի մեղա-ւոր չէ, ուրեմն Գրեյֆուս էլ մեղաւոր չէր: Զօլա շարունակեց պաշտպանել Գրեյֆուս-ին, մի բրտիւր հրատարակեց, որով դի-մում էր Ֆրանսիային և պաշտպանում էր արդարութիւնը: Այս տպեց մի բաց նա-մակ, ուղղած նախագահ Ֆորին, որին ցոյց էր տալիս թէ միմիայն իր Էստէր-Հադիի և Գրեյֆուսի գործում անաշուտութիւն չին պահպանել: Եւ որպէս զի կարելի լի-նի հաստատել այս բանը, Զօլա խնդրեց որ իրան երգուեալների դատաստանին յանձնեն:

Այս եռանդուն գործունէութիւնը, որ ցոյց տուեց Զօլա յանուն մարդասիրութեան ճշմարտութեան, առիթ տուեց խայտա-ռակ ցոյցերին, որոնք այժմ կատարվում են Ֆրանսիայում: Գրեյֆուս հրեական ծա-ղում ունի, ուստի նրա դատը դարձաւ հակահրեական շարժման հիմք: Ամբողջ իր աղաղակներով ուղում է սփռեցնել Զօ-լային մէկ դարավերջին այն ճշմարտութիւ-նը, թէ կարելի է և չը պաշտպանել ար-դարութիւնը, երբ նրան կարօտ է հրեան: Բայց Զօլա չէ ուզում լսել այդ անբարոյա-կան ճշմարտութիւնը: Զօլա մարդասիրու-թեան գաղափարը չէ կապում ոչ կոյր հայ-րենասիրութեան, ոչ էլ ցեղեկութեան և ազ-գային խնդիրների հետ: Նա պաշտպանում է մարդուն, հանրամարդկային գաղա-փարը: Եւ դրա համար ամբողջ Ֆրանսիան թըլում է նրա վրա:

Աւելի ավելի, ավելի խայտառակ անկ-ման հազիւ թէ համար մարդկութիւնը մեր դարի վերջում: Աւելի տխուր և յու-սահատեցնող լուրեր չէր կարող ուղարկել Ֆրանսիան, այն Ֆրանսիան, որ անցեալ դարի վերջին ստանեցնում էր ինչ աշ-խարհը իր հակայական աղաղակներով: «Հաւատարմութիւն, երբայրութիւն և ա-զատութիւն»: Թող պաշտօնական հայրենա-սիրութիւնը Ֆրանսիայի ամբօնները շոյէ

չը լսէ այդ խօսքերի շարունակութիւնը. նա նշանակած է և վաղը կամ միւս օրը կը պատկի:

— Այդ եկեղեցուկ:

— Ի հարկէ: Նրա նշանածը խաչին մէլքի որդին է:

— Այն տղան, որ ման է գալիս գիւղում:

Գրական պատասխանը Աննա-Խաթունի փո-խարէն տուեց տանուտէր Օհանը: Բէկը, ինչպէս երևում էր, առանց այդ էլ դիտել թէ ով է նը-շանածը: Մէլքի կինը պարզ նկատեց, որ նա յօնքերով ու բերանով մի արհամարհական ծա-մածուութիւն գործեց. չափազանց չնչին մարդ էր նրա հակառակորդը:

— Այդ րակտը արժան չէ քո աղջկան, ասաց նա քիչ լուռ մնալուց յետոյ:— Ինչու ես չտալու:

— Դատաւարացող խաչին մէլքին է, որ ամեն չարախ մարդ է ուղարկում, պահանջում է շուտ վերջացնել: Նա ասում է, որ հարսանիքը պատ-րաստ է և հիւրերին հրաւէր է գնացնել. շատ մեծ մարդիկ են կանչված:

— Դատ է սիրում իր որդուն:

— Այո, որդուն և հարսին...

Այդքան էլ չօգնեց: Բէկը չը գիտէր, որ մէ-լքի կինը չափազանցում էր, բայց բարձրացրեց իր ձեռքը, արգելման նշան արաւ:

— Եւ կը փակեմ ձեր բոլոր եկեղեցիները, որ ոչ մի գեաւուր չուն չը համարձակվի պսակ կա-տարել: Իսկ այն լակոտին ասա, որ կորչի այս-տեղից:

Պատկը արգելվում էր, բայց ինչու: Պատճառը

վայրենի, եսամոլ շփոխստութեան զգաց-մունքը, թող նա ծառեր կարգայ այն մա-սին թէ Ֆրանսիան միշտ առաջադէմ է: Իրողութիւնը անողորմ է: Այժմ Ֆրան-սիայում պանամեան հերոսների, վաճառ-վող մամուլի հայրենիք Ֆրանսիայում լսվող աղաղակներն են. «Մա՛հ հրեանե-րին: Կեցցե՛ք ոստիկանութիւնը»:

Մի դար— և այլասեռութիւնը այս չա-փերին հասած...

ԱՅՐ Ե ԶԱՆԱՊԱՐԸ

Ոչ մի ժամանակ հայը չէր դարձել այն-քան բազմաթիւ քրիստոնէական առաք-կայ, ինչպէս վերջին երեք չորս տարին: Հայի վրա յարձակվեցին, հային գովասանե-լան կարգացին, հայի կեանքի մէջ կատար-վող աւօրեայ երեւոյթներին տուին զանա-զան բացատրութիւններ: Համակողմ ան-ձինք հային վերաբերեցին չափազանց մեծ ընդունակութիւններ և բարեմասնութիւն-ներ, տեսնելով նրա մէջ ապագայ ընդար-ձակ կուլտուրական զարգացման համար աներկբայ գրաւականներ: Հայտնեց մա-ղիկ բացասեցին հայի անուրանալի արժա-նաւորութիւնները և վերաբերեցին նրան չեղած պակասութիւններ:

Դժբաղդաբար, այդ քրիստոնէական շատ վայրկիւրը եկաւ նրանք չէին հիմնված լուրջ ուսումնասիրութեան վրա, այլ ար-գասեցին հին հայկականութեան և հակակրու-թեան զգացմունքների թելադրութիւննե-րի: Այդ պատճառով հայի համար նը-րանք չէին կարող ուսանել ի ինքն, այդ բոլոր վէճ ու կռիւ, հիացում է պա-խարակում ոչ մի ներքին շարժում առաջ չը բերեցին հայի կեանքի մէջ և նրանցից մնաց միայն մի մեծ աղմուկի տպաւորու-թիւն:

Սակայն մի բան մնաց անկասկած և ա-նուրանալի, այդ այն է, որ հայը ներկա-յանում էր աշխարհի առաջ ոչ իբրեւ վայ-րենի կամ միջնադարեան մի համայնք, ոչ իբրեւ քիւրդ, չեքքի կամ լեզգի, այլ կուլ-տուրական ձգտումներով մի ժողովուրդ, ու-րի գիւղական մեծ ամասնութիւնը փաստակում է իր օրական ապրուստը հա-լալ աշխատանքով և որի առաջնորդող դասի մէջ կազմվել է և կազմվում է ին-

չը յայտնեց բէկը: Եւ հարկաւոր էլ չէր. աղջկայ մայրը արդէն հակացել էր ամեն ինչ: Այլ ես ոչ մի կասկած, ոչ մի հանդամանք, որով կարելի էր խաբարել: Կայծակը տրաքեց նրա գլխին, աչ-քերի առաջ ինչ որ սե չըմաններ երևացին և նա վայր պիտի ընկնէր, յուսահատ աղաղակ պիտի արձակէր, եթէ մի լուռ մայր չը լինէր:

Ցագնապի վճռական բօսկին հրաշալի է մայրը: Տարալի անձնատուրութեան այն զգացմունքով որ տանում է նրան զայլի առաջ, պողպատ է թափում նրա մէկը բազումների մէջ, որոնց և խօսում է գաղանի բերանը՝ գաւալն աղատելու համար: Հրաշալի էր Աննա-Խաթունը, երբ գու-նատված, համարեա չնչապառա, բայց առանց գժուարութեան, նոյն իսկ հպարտութեամբ, պա-տասխանեց.

— Կա մեր գործը չէ. Մէլք-Յուսէֆին սկսել է իր ձեռքով և մեղ հրամայել է վերջացնել. նրա կամքը սուրբ է և մեղ համար:

— Եւ վաղուց գիտեմ, որ դու շարունակում ես քո մարդու գործերը. առաջին նշանն այն է, որ դու էլ թշնամի ես մեզ...

— Թշնամի...

Աննա-Խաթունը մինչև անգամ ծիծաղեց: Եւ իրաւ, այդ անունը, որ տուեց բէկը, միայն ծի-ծաղ, մի տխուր ծիծաղ կարող էր յարուցանել նրա մէջ: Թշնամի... Ինչ է նա, ինչ ոյժ ունի որ թշնամի անուանվի, այն էլ օսմանցների թշնամի... Բայց այս ճշմարտութիւնը համոզիչ չէր բէկի համար. ընդհակառակն, նա աւելի

—Մի վախիր, ոչինչ չի լինի...
(Կը շարունակվի)

զինուորական, մի ծախսող ուսուցիչ և հայ փառ-
տաբան մը, կարապետ էֆենդի տունը, կերթան
վերադարձաւ Մկրտիչ խաչատրեանի տունը, և կը-
սեն, որ զինք պալատէն կը կանչեն, հիմա հե-
տեքին պէտք է երթայ: Իր հարցման վրայ, թէ
ինչ բանի համար կուզեն զինքը: Հանքի գործին
համար է: Կրտսէն: Կը պատասխանէ, թէ ինչ չէ
հանքի միակ տէրը, ուրիշներ ալ կան, և անոնց
հետ պէտք է խորհրդակցել նախ: «Այդ ամենը
գիտենք, բայց թելի կուզեն, դուն գալու ես»
կրտսէն: Եւ իրօք ալ կէս համողելով կէս բռնի
կը տանեն պալատ, մի Գազրի պէյի սենեակը:
Գուրբը, ներսը լեցուն զինքը: Գազրի պէյ,
բարձրաստի, արեւմտեան ղեմքով, հովանի
մարդ մը, ներկաները դուրս հանել տալէ ետք,
կըսէ Մկրտիչին. «Գուրբ մեծագոյն պարտքի
մը ստացաք: Երբեք եղբեր, պարտատէսն ալ
դատ բացեր է ձեզ դէմ. գործերնիդ գէշ էր, դը-
րամները պիտի առնէր ձեզնէ, ես դատարան
լուր զրկեցի, ես կեցողցի, ստացաք զինքիդ ալ ես
պիտի առնեմ ու ձեզ յանձնեմ, բայց հիւշդ հա-
պարտ ու կի պէտք է տաք ինձ: Երբտասարդը
կապչի, ոչ պարտք ունէր, ոչ ստացաք: Երբ
տուած, ոչ ալ դատ կար բացված իրեն դէմ:
«Եֆենդի, կըսէ, ես պարտք չունիմ մէկու, ինչ-
պէս կրնայ ըլլալ...»: «Ես ինչ որ ըսի՝ այն է,
կրնա՞տէ պէյը, խնդրեմ, երկար խօսակցու-
թիւնները չեմ սիրեր: Գիտեմ, գեռ տակաւին
այգալիս գումար մը չունիք, բայց երբ հանքեր-
նիդ ծախքը՝ դիւրին է ձեզ այն ատեն հինգ հա-
զար ոսկին վճարել: Եւ ես ձեզ այնքան բարեա-
ցակամութիւն ցոյց կը տամ, որ կը հաճիմ մի
տարվայ միջոցին տաք այդ ստակը, միայն այժմ
մի թուղթ պէտք է ստորագրէք, որ մի տարվայ
մէջ պիտի հաստատուէք պարտքերնիդ: Սա ալ
աւելցնեմ, որ ես լաւ տեղեակ եմ ձեր հայ կո-
միտներու հետ ունեցած յարաբերութեանց. դի-
տեմ, որ դուք տասը հազար ոսկի էք խոստա-
ցած տալ նոցա՝ երբ որ հանքը ծախէք... Այ
դուք մտածեցէք: Ձեր կեանքը ձեր ձեռքին է:
Կրնաք զայն ազատել ու կրնաք կործանել: Ը-
սե՛ք պէտք չը կայ, որ կոմիտէներու մասին խօս-
քը սուտ էր՝ ստացաք զինքն և դատին պատմու-
մութիւնները նման, բայց ինչ օգուտ... Մկրտիչ
խորհելու պայմանաժամ կը խնդրէ. ի դուրս ի
վերջոյ պէյը կը յայտարարէ բացէ ի բաց. «Ա-
ռանց ստորագրելու ասկէ ողջ դուրս չե՛ք գար»:
Երբտասարդը, իրաւամբ սարսափած, կաղաչէ, որ
գոնէ թող արմի իրեն, տաճկերէն գրել կարգալ-
չը գիտեցանք, հայերէն գրով ու տաճկերէն լե-
զուաւ գրել պէ՛տք է ի կիւնէ ընելը ստացաք իրը:
Այդպէս ալ կընեն: Կը ստորագրէ մի թուղթ,
թէ 5,000 ոսկի փոխ առած լինելով Գազրի պէ-
յին, պարտաւոր է թակակէն մինչև մի տարի
հաստատելու, ապա թէ ոչ՝ ունեցածները պիտի
գրաւվին: «Եւ եթէ կուզես, կը յաւելու պէյը իր
վերջարան, պատմէ դուրսը այս եղա՞ծ... Եթէ
որ կեանքէդ զգված ես, դուն գիտես: Կրնաք եր-
թալ»:

Մկրտիչ դուրս հաղիւ թէ կեղնէ՝ կը մարի
կիցայն: Նոյն օրը սակայն եղելութիւնը իմաց
կը տրվի արդարութեան և ոստիկանութեան նա-
խարարներուն, որք իբր թէ քննութիւն կը բա-
նան, կապահովացնեն հայը, բայց ստացաք իրը
կը մնայ Գազրի պէյի քով, որ կը յայտարարէ
ամենայն հանդարտութեամբ, որ ատենից ունե-
նալով 5,000 ոսկի՝ օրինական ընկալալիք ու-
ղած է և ատանց որ ու է ստիպմունքի կամ
բռնութեան առած:

Ձը մոռանամ ըսել, որ պատրիարքը խմա-
նով կը կանչէ Մկրտիչը և մանրամասն պատմե-
լալէ ետք՝ առ ողջ աւելան խրատներ կու-
տայ... Ասոր համար ուղեր էլք զիս, սրբազան»,
կըսէ Մկրտիչը:

ՆԱՄԱԿ ՊԱՐԿԱՍՏԱՆԻՅՑ

Թաւրիզ, գեկտեմբերի 24-ին
Թաւրիզում հեղինակ երեւում են մտաւոր
կեանքի շարժման նշաններ չափաւս անձերի
համար եւ: Յայտնի է այս երկրի երկտասարդ
սերունդի կեանքը: Կեանքի մէջ մտնելուց յետոյ
համարեա զարգացում է մտքի և բարքերի մշա-
կութեան գործը, ազատ ժամերը նուիրվում են
անվերջ թղթաւարտութեան և նարդի ի, որոնք
չափ տարածված են, և վերջանում է օղիով ու
գինիներով՝ ճոխ սեղանների առաջ... Հետաքրք-
րութիւն դէպի լուսաւորութիւնը, դէպի հոգու և
մտքի կրթութիւնը գոյութիւն չունի թէպէտեւ
երկու թաղերումն էլ կան գրադարան-ընթերցա-
րան, բայց օրերով դատարի են մնում. միւս
կողմից երկտասարդութիւնը և առհասարակ տե-
ղացի ժողովուրդը իր սովորական գործի մէջ
մնում է քարացած:

Այս տիւրը հանգամանքն ուղարկութեան ար-
ժանի համարելով, Լիւաթա թաղի Հայկազեան և
Թամարեան երկսեռ ուսումնարանների ուսուց-
չական խումբը, նոյնները ամիս սկիզբներից
սկսած, բաց արեց կիրակնօրեայ ուսումնա-
նարան՝ ուր աւանդվում են ուսուց, Ֆրանս-
սիական և պարսից լեզուներ, թուրքական լեզու,
հայտաբանութիւն, հայոց պատմութիւն, աշ-
խարհագրութիւն, ճիւղային: Ուսուցչական
խումբը խրախուսված իր գործի աջողութիւնից,
հաստատեց նաեւ երկու շաբաթը մի անգամ գի-
շերային լսարան, որտեղ կը կարդացվեն ժո-
ղովրդական և գիտական դասախոսութիւններ:
Մի տարուց ի վեր Թաւրիզում հաստատված
գոյություն կ'ապաւնեն, դանազան ակումբներում
իր ժողովրդական օգտակար դասախոսութիւննե-
րից յետոյ, այս անգամ, ինտելիգենտ դասին
բաւականութիւն տալու նպատակով, առաջին
անգամ, ուսուցչական խմբի խնդրանքով, գեղե-
սեմների 19-ին Լիւաթայի նորահաստատ լսարա-
նում դասախոսեց, ներք ընտելով «Ոճրակա-
նութիւն» գիտական հարցը: Լսարանը լի էր եր-
կու սեռի խումբ թաղականներով, որք ծախա-
նութեամբ ընդունեց դասախոս գոյություն: Մենք
հաւատացած ենք, որ լսադուր հանապարհը
հարկված է Թաւրիզի հասարակութեան համար:
յոյս ունենք, որ ուրախութեամբ կը յաճախեն
կայանալի դասախոսութիւններին, և այս աղիւս
միջոցը պատճառ կը լինի աղատելու մեր երի-
տասարդութիւնը՝ խաղի և գինու անողորմ ճան-
կերից:

ՆԱՄԱԿ ԱՄԵՐԻԿԱՅԻՑ

Պոստոն, գեկտեմբերի 25-ին
Այսօր ծնունդ է: Ամերիկացի սովորութիւն
ունեն Քրիստոսի աշխարհ կիւն օրը իրարու
ընծաներ տալով պատեն: Եւրոպայից ի վեր
մեծ ու փոքր վաճառականներ իրարու հետ կը
մրցեն: Դիւրեւ յաւելու արտաւեր ընծաներու
ամենէն գեղեցիկն ու հրապուրչիւնը շաբաթու-
իրենց խանութին պատահանը: Պէտք է ըսել
սակայն, թէ հայ զաղթականութեան հոգաբար-
ձութիւններն ու կրօնականներն յիշուող ընծա-
ներու ամենէն փառաւորներն տունն մեզ: Ձեռք
գիտեր թէ որոնք աւելի արժանի են մեր շնոր-
հակալութեան, հոգաբարձութեան, թէ վարդա-
պետները, այս խնդիր շատ դժուար է լուծել:
Նախ Ուստրէն ստացանք «Վերթի» մեծ ու ա-
նակնալ ընծան: Մշտնջող վարդապետը կը պըն-
դէր թէ իրաւունք ունի, իբր նախագահ, հոգա-
բարձութեան որոշումներն վերջոյ ընել և ասոր
իր հետեանք՝ Ուստրի հայերը կարճ ժամա-
նակի մէջ իբր նուէր ստացան երեք հատ տար-
բի հոգաբարձութիւն, այդ հայաշատ քաղաքին
մէջ հոգաբարձութեան ընտրելու մի այնպիսի աշ-
խարհ գործունէութիւն կայ, որ եթէ Մշտնջող
վարդապետի վարչութիւնը մինչև յաջորդ յիշուող
տեղ, ամեն ուսուցչի հայ գէթ անգամ մը հոգա-
բարձու եղած պիտի ըլլայ մինչև այն ատեն...
Պոստոնի մէջ ալ հոգաբարձութիւն մը ունենք,
որ չէ հրաժարուի վարդապետ մը, որ այդ պա-
րտնքներն հետ կուէն չը դադրէ: Ժողովրդեան
կողմէն յանձնախումբ մը ընտրված է վարդա-
պետի և հոգաբարձութեան վեճերը քննելու: Հոգա-
բարձութիւնը ընդհանուր հովուի մէջ շրջաբեր-
կանի վրայ հիմնվելով չուզել հաշիւ տալ իր
գործոց յանձնախումբն ալ նոյն աղբիւրէն ըզը-
լած երկրորդ շրջաբերականի մը գործութեամբ:
Հոգաբարձութիւնը հրաժարեցնելու ջանքեր կընէ:
Եւրոպայից ի վեր շաբաթականներու տեղ հայ-
հոյանքներ կը ըսեն կրօնական պաշտաման ներ-
կայ գործողները: Անցեալ կիրակի թրքախումբ
հայոցանայ յաջորդը է կոփամարտն այսօր:
Դիւրեւ կիրակին հայոց եկեղեցին փակ է:
որովհետեւ եպիսկոպոսին երէցը չէ ուղեր սովո-
րականին համաձայն իր սրահը հայերու տրամա-
դարեալով կանխաւ չը կարգադրեն, և այսօր ճաշարաններն
դեռ կը շարունակվեն կուէնները, երբ ուրիշներ
«աշխարհ» վրայ խաղաղութիւն» կըգնեն:

Ուստրէն կը ըսենք թէ հայ եկեղեցւոյ
մօտ բնակող ամերիկացիք կառավարութեան
գիտելով կը գանգաւորեն, թէ հայերու աղմուկէն
այլ և չեն կրնար այնտեղ բնակիլ: զարմանա-
լի չէ այս, երբ յիշենք Մանուկ վարդապետի հո-
գաբարձութեան փոխելու արտակարգ գործունէու-
թիւնը:
Այս միջոցին միտնաւորները մեծ փութով կաշ-
խատեն բողոքական փրօնագրաւոր անկ Ամերի-
կայի հայոց մէջ. վերջերս իրենց զարդոցներու
հին վարժապետներէն մեծ թիւով հոս եկած են,
անոնց ամենէն աչքի զարնոյնները հայաբնակ
քաղաքացի մէջ քարոզչի պաշտօն ձեռք ձգած են:

հայ ժողովուրդը բաւական մեծ թիւով կուսկնորէ
այդ երկտասարդ քարոզչներու: Հայ կրօնաւոր-
ները այդ փրօնականացի դէմ ամենէն կատարի
բանադրանքներն կարգաւոր հանդերձ իրենց այս
ներկայ ընթացքով ամենէն շատ, նոյն իսկ մի-
սիոնականներն աւելի կը նպաստեն հայ եկեղեցւոյ
զաւակներ իրենց օտարացնելու: Ամերիկայի
հայերս ինչ պէտք է ընենք, բողոքական դաւ-
նանք, հայ եկեղեցին կարող անձուէր և փոք-
ձառու կրօնաւոր մը չունի նոր աշխարհի տա-
րաբխտ գաղթականաց համար: Արմէն

ԱՐՄԱՐԻԿԱ ԼՈՒՐԵՐ

«Köln. Zeitung» լրագրի Կ. Պոլսի թղթա-
կիցը հարցրում է, որ զեսպանների խորհրդակ-
ցութիւնները՝ կրեաթի ապագայ կազմակերպու-
թեան մասին՝ վերջանալու վրայ են և նրանց
մշակած ծրագիրը թիւրքիայի և մասնատակա-
նների համար՝ խիստ անապատ ընաւորութիւն է
կրում:

—Սուլթանը հրատարակել է մի գաղտնի ի-
րադէ, որի մէջ ասված է. «Սուլթանի ականջին
հասել է, որ արտաքրտու ջանքեր են լինում վը-
նասելու գերմանական քաղաքականութեան թիւր-
քիայում և յանդիմանում են այդ քաղաքականու-
թիւնը իրեն ետախրական: Սուլթանը, որ կա-
տարեալ հաւատ է ընծայում գերմանական կայս-
րի քաղաքականութեան անհաստատութեան, յոյս
ունի, որ իր չընդապատողները ու չեն դարձնի
այդ ինտրիգների վրայ»:

—Կ. Պոլսի եւրօպական ղեկավարները ստացել
են հայ կոմիտէից մի յիշատակագիր, որի մէջ
մասնագրոյ է անվում հայկական նահանգներում
տիրող աղքատութեան վրայ և խնդրում է
մտնել ինքնօրինակը:

—Գունդարի 13-ին Սօփիայում պէտք է տեղի
ունենայ Բոլքարայի առաջին իշխան Ալեքսանդ-
րի արձանի բացումը, որին ներկայ պէտք է լի-
նի նաև հանգուցեալի այրին:

—«Новое Время» լրագրին հեռագրում են
Պարիզից հետեւի մանրամասնութիւնները այն
բաց նամակի մասին, որ ուղղել է Զօլա նախա-
գահ Ֆելիքս Ֆորին և տպված է «Aurore» լրա-
գրում: Նամակը լրագրի եօթը սիւնակներն է
գրաւում: Զօլա վերջում ասում է. «Ես մեղա-
դրում եմ Պատի գիւղ-կալմին, որ նա դարձել է
դատարանի ստանալական սխալի կատարող և
յետոյ պաշտպանել է այդ դրուել գործը յան-
ցաւոր մեղանալութիւններով, մեղադրում եմ
Մերիթին, որ նա մասնակից է մեր դարի ամենա-
մեծ անարդարութեան. մեղադրում եմ Բիլլօնին,
որ նա, ունենալով Գրեյֆուտի անմեղութիւնը
ապացուցանող անկասկածելի փաստեր, ծածկեց
այդ փաստերը և դրանով յանցաւոր վիրաւորանք
հասցրեց մարդկութեան և ճշմարտութեան ու-
նենալով քաղաքական նպատակ և կամենալով
կայտառակութիւնից ազատել զինուորական ընդ-
հանուր շտաբը. մեղադրում եմ Բուալէֆրին,
Գոնդին, Պելլէին, Էկսպրաններին, երկու վին-
կտրական դատարանների անդամներին և դրանց
հետ մասնակից եղած մարդկանց և հաստատու-
թիւնները: Բացառելով իր միտքը ծայրահեղ
խառնութեամբ, Զօլա ի վերջոյ ասում է. «Ես
գիտեմ, որ կանգնում եմ քրեական օրէնքի յօ-
դուածների հարուածների տակ, որոնք պատ-
ժում են զինվարականի համար, բայց ես են-
թադրվում եմ այդ հարուածներին յօժարու-
թեամբ: Թող յանդիման յանձնել ինձ երդուալ-
ների դատարանին. թող հրապարակական քըն-
նութիւն սկսեն»:

—Երկու հարիւր գիտնականներ, գեղարուե-
ապետներ և գրականագետներ հրատարակել են
մի յայտարարութիւն, որով բողոքում են խտեր-
հաղի գործի փակ դռներով քննելու դէմ և
պահանջում են Գրեյֆուտի գործի վերաքննու-
թիւնը: Այդ յայտարարութեան ստորագրել են ի
միջի այլոց՝ Ալաուդ Ֆրանս, Զօլա, Բիլլէ, Գիւլլօ:
—Ընդունել հեռագրում են, որ Էլիսաւ դը-
տել է մի նոր մետաղ, որի խառնուրդը տալիս
է թուլիլն պողպատի ամրութիւն և առաճգակա-
նութիւն:

—Կ. Պոլսի ուսուցչ նոր դեսպան Ջինովիչի
մասին Berliner Tageblatt լրագրին ասում է.
«Այժման դժուար ժամանակներում, որի մէջ
կարծում է Արեւելքը, դժուար էր նրանից աւելի
յարմար դիպումատ գտնել այդպիսի մի պատա-
խանաւոր պաշտօնի համար: Ամեն տեղ, մանա-
ւանդ թիւրքիայում, նրա գալտեան անհամբեր
սպասում էին: Այդ մարդը ճանաչում է Արեւելքը
և լաւ տեղեակ է թիւրքաց ինքուրի, ուստի նա
կարող է գործել առանց թարգմանների, և գոր-
ծել ոչ միայն գործով, այլ և խօսքով»:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Թիֆլիսի հայոց փողոցային մամուլին մի թու-
թակ էր պատաստ, որ իր յիշատակները
թուլթակային ճշգրտագիտութեամբ հասցնէր Բոս-
ֆորի ասիերը, ուր ինչպէս յայտնի է, գրական
դատարանութիւն է կրթում և ուր հրապարակ-
ախօսութիւնը աշխարհաշուակ Բիւզանդ ֆէյհանի
արտօնութիւնն է դարձել: Այդ թուլթակի դերը
կատարում է մի ոմն Եանապար, Բաղդադ, նա,
որ ինքն իրան հուշակց թիւրքաւայ որբերի
խնամատարութեան առաջին, միակ և անդուգա-
կան ինիցիատոր: Անա ինչ է գրել այդ Եանապար

իր ազգասէր բարեկամ ֆէյհանի լրագրում Թիֆլի-
սի հայոց Հրատարակչական ընկերութեան մասին.
«Հրատարակչաց ընկերութեան գլխաւոր թիւու-
թիւնն այն է, որ իր պատկանած կուսակցու-
թեան անդամներուն ու է թարգմանութիւնն
առանց վարանելու հրապարակ կը հանէ, որով
փոխանակ օգտակար ըլլալու, անօգուտ ծառա-
յութիւն մը կը մատուցանէ հասարակութեան:
Զարմանալի է որ այդ հաստատութիւնն որ եր-
բեմն այնքան գնահատելի գործեր (կարգւն «Ա-
գաթանդուս», Գետնդ պատմագիր, և այլն),
հրատարակած է, հիմա գործիք մը եղած է ծա-
նօթ կուսակցութեան մը ձեռքը: Կաւկասի մէջ
ամեն բան կուսակցութիւններու ձեռք է, անո-
ղորմ և ապարդիւն կուսակցութիւն»:

Թուլթակային հանձարը, ինչպէս գիտէք, բա-
ւերի, նախադասութիւնների, նոյն իսկ ամբողջ
պարբերութիւնների ձեռք կրկնելն է: Բազուի
թուլթակը այդ կողմից բողոքովն անքիւն է:
Միայն մի բան, որ մատչելի չէ թուլթակների
հանկարգողութեան, այն է, որ «անողորմ», «ծա-
նօթ» կուսակցութեան գոհութեան ժպիտով է
տեսնում, որ իրան չեն հաւանում Բիւզանդ ֆէ-
յհանի թիւրքի և նրա երգարակցիները կուլիա-
ստէ: Ուրիշ վարձատրութիւն հարկաւոր էլ չէ...

Գեկտեմբերի 28-ին Սուլթան Աբդուլ-Համիդի
ծննդեան տարեդարձն էր: Այս տոթիւթով Բիւ-
զանդ ֆէյհանի «Բիւզանդիստ» լրագիրը տպել է
հետեւեալ «տոգորական» ներդրող.

«Լրագիրս կիրակի չը հրատարակուելուն աղա-
բաւ, երէկ չը կրկնել մեր խնդակցութիւնները
խառնել թուրք մամուլին խնդակցութեանց, վէն-
Սուլթան Ապուլ-Համիդ կայսրը Միւնիստեր-
ժանկաւտ տարեդարձին առթիւ: Ուստի, այսօր
կը փութանք նոյն պարտականութիւն կատարել
և ինչ որ գրենք՝ քիչ է, նկարագրելու
համար պաշտօնական և ոչ-պաշտօնա-
կան խանդավառութիւնն: որ արտա-
յայտուեցաւ այս առթիւ և երկրի ա-
մեն կողմերն, այլ ամառանդ ճայրաքաղա-
քա մէջ, որ երէկ յոյժ ոգևորեալ տեսարան մը
կը ներկայանայ: Տաճկաստանի միլիտարուր ժո-
ղովուրդը մեծակայելու հանդիսաւորութեան
կատարելին այս փառաւոր Տարեդարձ մեծագոր-
ծինկալովն և Օրտոստախտ վէհայեան Սուլ-
թան Ապուլ-Համիդ խախտ իրան: Ուրիշն ու տղան
ամէն ոք կը հասկնայ թէ այս Տարեդարձ երկրին
համար մեծ նշանակութիւն ունեցած է: Ամէն
ցեղէն ու դասնութիւնէ միլիտարուր հպատակ-
ներն, որք կարելի այս մեծ և գեղեցիկ երկրին
լայնատարած սահմաններուն մէջ՝ հաւատարմու-
թեան և երկրպագութեան ոգիով ստորորւած՝
փութացին մասնակցել օրուան մեծ տօնախմբ-
ութեան:

«Մասնաւոր դէպքն որ այս տարուան կայսե-
րական տարեդարձին աւելի մեծ նշանակութիւն
տուած, ընկալանալէս Օսմ. բանակին յաղթու-
թիւնն է չեղլէն բանակին վրայ, Տէրութեան
ցամաքային և ծովային ոյժերուն ցոյցին է, որք
ուրախութեամբ լեցուցած են Օսմ. սիրտերը: Եր-
կիրը նոր հաւատք մը զգացած է իր ճակատա-
գրին վրայ, Տէրութիւնը նոր գիտակցութիւն մը
ունեցած է իր զօրութեան ու ապրիքութեան, և
ժողովրդեան ալ և ալ տարիք միջադային
քաղաքականութեան ընդհանուր արդիւնքը սոս-
նելով՝ ուրբա ըլլալու և խնդակցելու և բարե-
մաղթութիւններ ընելու նորանոր առթիւները դը-
տած են, որով այս տարուան հանդիսութիւնը
ուրիշ տարիներէ աւելի փալտու եղած են:

«Երէկ ոչ միայն հպատակ ժողովուրդը՝ իրենց
պետերուն և երեւելի ներկայացուցիչներուն մի-
ջոյաւ, այլ և օտար վէհայեան և կառավարու-
թեանց պետերն իրենց ղեկավարներուն միջոցաւ
փութացին իրենց խնդակցութիւններն ու բա-
րեմաղթութիւնները մատուցանելու: Նորին կայ-
սերական վէհախառնութեան Միւնիստեր տարե-
դարձին առթիւ: Սուլթանը խաղաղաւորութեան
հանդէսներն ու խրախմանութիւնը կրեցնեցան
երկրին մէջ ծայրէն միւսը դուստուր «Բատիշա-
նը» չօգ եաշա՝ ետանդաւորաբար աղաղակաւ Արե-
ւելեան և Արմատեան եկեղեցիներու մէջ ալ բա-
րեմաղթութիւնը եղան նոյն եղանակաւ յայտա-
բար նշանք ըլլալով ամենուրեք տիրող հաւա-
տարմութեան զգացումներուն, այս յիշատակելի
և անուանի տարեդարձին առթիւ: Ուստի և
մենք կը փակենք մեր այս հակերձ տողերը մի և
նոյն հաւատարմական աղաղակաւ՝ կեցցէ սուլ-
թան Ապուլ-Համիդ խան Կալի»:

Եւրօպական լրագիրները հարցրում են, որ
Լեւոն XIII պապը իր քահանայութեան 60-ամեայ
տարեդարձի օրը հետեւեալ ընծաներ է ստացել.
1) Պետերբուրգից՝ մի հոյակապ մատանի և յա-
կինքներով՝ աղամաններով՝ զարդարված մի
արկղիկ. 2) գերմանական կայսրից՝ 50,000 մարկ
ոսկի. 3) սպանիական թագուհուց՝ 100,000
ֆրանկի ոսկի. 4) Ն

